

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բ. Գ. Պ.

Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ՝ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՇՐՋԱԳԾՈՒՄ^{1*}

Բանալի բառեր. Հովհաննես Թումանյան, Գարեգին Սրվանձտյան, բանահավաք, բանահյուսական ակունքներ, «Համով հոտով», «Մանա-նայ», «Սասունցի Դավիթ կամ Միտրի դուռ», «Գրոց-Բրոց», սկզբնաղբ-յուր, պատում:

Նախաբան

Ժողովրդական բանահյուսությունը Հովհաննես Թումանյանի ստեղծագործության կարևորագույն աղբյուրն էր: 18-ամյա բանաստեղծի առաջին իսկ հրապարակախոսական ելույթը՝ «Մի ավանդույթ-յուն» (1887) ակնարկը, ազգագրական բնույթ ունեւ: Իսկ 25-ամյա հասակում գրած «Բորչավիղ» հոդվածի մի հատվածը առաջին անգամ տպագրվելիս ուներ «Ֆոլկլորի մասին» վերնագիրը: Այստեղ Թումանյանը տալիս է բանահյուսության ճշգրիտ սահմանումը և կարևորում է բանահյուսության բացառիկ դերը գրականության համատեքստում՝ անվանելով այն «Մեր գրականության հարազատ հողն ու պատվանդանը»²:

Թումանյանը ակնածանքով էր վերաբերվում բանագետի ու բանահավաքի գործին ու կոչմանը: Հենց այս համատեքստում պետք է նկատել Գ.Սրվանձտյանի գործի նկատմամբ բանաստեղծի մեծագույն հարգանքն ու բարձր գնահատականը: Թումանյանին անհանգստացնում էր բանահավաքի գործի դժվարությունները և դրանով պայմանավորված բանավոր գրականության կորուստները: «Մասնավոր ապահով մարդիկ չկան, որ ժողովեն,-գրում է բանաստեղծը,- այնպիսի հարուստներ չկան, որ ձեռնհաս մարդկանց միջոց տան ժողովելու, ընկերություն

^{1*} Ընդունվել է տպագրության 14.05. 2022 թ.:

² **Թումանյան Հովհ.**, Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, (այսուհետ՝ ԵԼԺ) հ.6, Եր., 1994, ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատ., էջ 43:

չկա, որ զբաղվի դրանով... և այսպիսով մոռացվում, թաղվում, կորչում են **մեր ազգային հոգու ծնունդները**»¹ :

Բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակումը թումանյանի գրական նախասիրությունների հիմնական ոլորտն է, ուր բանաստեղծը մուտք էր գործել դեռ աշակերտական տարիներից, պատանեկության շրջանում, երբ սովորում էր Ջալալօղլու դպրոցում և օգտվում էր Տիգրան Տեր-Դավթյանի հարուստ գրադարանից: Թումանյանի ընկալումներում ավանդությունների, առասպելների, գրույցների ու ժողովրդական հավատալիքների շտեմարանը ներկայանում էր մի թանգարան, գանձարան, որի մասին ավելի ուշ գրեց. «Ահա թե որտեղ է հայոց գրականության աղբյուրը. ահա թե որտեղից պետք է խմի հայոց բանաստեղծը, հայոց վիպասանը, հայոց գրողը, որ զորանա»²: Հետևաբար Գարեգին Սրվանձոյանի գործը՝ թումանյանական ընկալմամբ, որպես ազգային գրականության աղբյուր, հայ մշակույթը և հայ գրողին զորացնող նշանակություն ունեւ: Ազգագրագետ Թամար Հայրապետյանի բնորոշմամբ Սրվանձոյանը մեր ազգագրության ու մշակույթի մեջ առանձնանում է՝ որպես «1870-ական թվականներից հայ ազգագրության ու բանահյուսության ասպարեզում սկիզբ առած հավաքչական բուն գործունեության նախածեղնող ու կազակերպիչ»³: Թումանյանի համար Սրվանձոյանը գործել է որպես բանահյուսական նյութերի՝ «ազգային հոգու ծնունդների» հայտնաբերող ու լավագույն պահապան:

Հովի. Թումանյանը և Գ. Սրվանձոյանի գրական ժառանգությունը

Բանաստեղծն իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում միշտ դիմում էր բանահյուսական, այդ բնագավառում նաև Սրվանձոյանի ազգային գանձարանի ընդերքին: Եվ մեծանուն բանահավաքն ու բանագետը դարձավ Թումանյանի ստեղծագործության ամենակենդանի աղբյուրներից մեկը:

Իր գեղարվեստական մտահղացումները գրական տարբեր ժանրերում իրականացնելիս բանահյուսական ատաղձը բանաստեղծը որոնում էր ամենուր՝ օգտվելով բանավոր աղբյուրներից և ուսումնասիրելով միջնադարյան ձեռագիր մատյաններն ու դրանց մշակումները, ժամանակի բանահյուսական նյութերի ժողովածուները, որոնցից հիշատակության արժանի են մասնավորապես Միքայել Միանսարյան-

1 Նույն տեղում:

2 Նույն տեղում, էջ 42:

3 Տե՛ս **Հայրապետյան Թամար Լ.**, «Հայ ժողովրդական հեքիաթների գրառման և գիտական իրատարակության շուրջ», «Վեմ», Երևան, 2009, թիվ 3 (28), իսկ տեմբեր-դեկտեմբեր, էջ 159:

ցի «Քնար հայկականը», որի նյութերի հիման վրա գրվեցին թումանյանի «Կաքավի գովքը», «Արագիլ», «Կաքավի ողբը» (1860), Կարապետ-Կոստանյանի «Նոր ժողովածուն» (Թիֆլիս, 1892), Գամառ Զաթիպայի «Ազգային երգարանը» (Թիֆլիս, 1856), Տիգրան Վարդանյանցի «Ժողովրդական անգիր բանաստեղծությունները», Երվանդ Լալայանի «Զավախքի բուրմունքը», Ալեք Մխիթարյանի «Տաղեր ու խաղերը»: Բանաստեղծի ուշադրությունից չէին վրիպում նաև ժամանակի պարբերականներում, մասնավորապես «Բազմավեպում» և Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդեսում» տպագրված բանահյուսական նյութերը: Այս շարքում իր պատվավոր տեղն ունեն Գարեգին Սրվանձտյանի հեքիաթների, ժողովրդական երգերի, հանելուկների, ասացվածքների, առածների ժողովածուները, մասնավորապես՝ «Համով-հոտով»¹ գիրքը, որի նյութերի հիման վրա գրվեցին բանաստեղծի «**Քաջ կիվիվը**», (1914թ., ԵԼԺ 2019, հ.1, էջ 285), «**Արտուտիկը**» (1908.ԵԼԺ 2019, հ.1, էջ 256)², «**Փոքրիկ երկրագործը**» (ԵԼԺ 2019, հ. 1, էջ 254)³: «**Մանանայ**»⁴ ժողովածուի նյութերի հիման վրա գրվեց «**Ճնճողուկները**» (ԵԼԺ 2019, հ.1, էջ 250)⁵: Բանաստեղծը օգտվել է նաև Կոմիտասի ու Մանուկ Աբեղյանի «Հազար ու մի խաղ» ժողովածուից⁶:

Սրվանձտյանի թողած ժառանգությանը թումանյանը վերաբերել է մեծագույն հարգանքով և մշտապես ու ամենայն խորությամբ ուսումնասիրել է այն, ընտրել ու մշակել ժողովրդական տարբեր նյութեր՝ ինչպես նշեցինք՝ մասնավորապես «Համով հոտովից» ու «Մանանայից»: Բանահյուսական հիմքով բանաստեղծությունները թումանյանը գրում էր «Հասկերի» և «Լուսաբերի», այսինքն՝ մանուկների դասագրքերի համար, այդ պատճառով էլ նա ժողովրդական մոտիվներով այդ բանաստեղծությունները մշակում էր՝ փոխելով ու լիարժեքելով առաջին հերթին լեզուն ու ոճը, դարձնելով ժողովրդական գրական լեզու և միանգամայն նոր գործ: «Քաջ կիվիվը» բանաստեղծության նախօրինակը՝ «Համով հոտով» գրքում գետնոված «Հանդես թռչնոց» վերնագրով ոտանա-

1 Գարեգին Սրվանձտյան, «Համով-հոտով», Կ. Պոլիս, 1884, 384 էջ:

2 Տպագրվել է «Լուսաբեր Ա», (այսուհետև՝ **Լ** և դասարանի համարը՝ Ա, Բ, Գ) Թիֆլիս, 1908, էջ 90, այսուհետև՝ «Լ Ա», 1920, էջ 86:

3 Լ.2, 1908, էջ 86, Լ.3 1909 էջ 103-104, Լ3, 1920, էջ 100:

4 «Մանանայ», Կ. Պոլիս, 1876, 458 էջ:

5 Լ.Ա, 1907 էջ 78-79, Լ.Բ, 1908, էջ 114, 115:

6 Տե՛ս «Հազար ու մի խաղ ժողովրդական երգարան առաջին յիսնեակ», խմբագրեցին Կոմիտաս Վարդապետ . Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1904, տպ. Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 103 էջ և «Հազար ու մի խաղ ժողովրդական երգարան երկրորդ յիսնեակ», խմբագրեցին Կոմիտաս Վարդապետ . Մանուկ Աբեղյան, Վաղարշապատ, 1905, տպ. Մայր Աթոռ Ս.Էջմիածին, 71 էջ:

վորը, ուներ 28 տող, իսկ Թումանյանի մշակումը՝ 41: Սրվանձության գրի առած տարբերակի 28 տողից բանաստեղծն ընտրել էր միայն 4-ը, որոնցից առաջին տողն էր՝ «Ճախիններում, գետին մոտիկ», 3-րդ՝ «Բարձրասըրումը, ցըցունազարդ», 11-րդը «Լազլագի դեմ արշավեցին» և 23-րդը՝ «Ծառի ծերին, սարին, քարին»: Սրվանձության տարբերակը բարբառով էր: Բանաստեղծն այն վերածել էր գրական-ժողովրդական լեզվի, սկզբից ավելացրել էր երկու նոր տուն, փոխել էր տողեր ու բառեր, վերնագրել «Քաջ կիվիվը»՝ փաստորեն գրելով միանգամայն նոր բանաստեղծություն: Այնուամենայնիվ, «Հասկերում» տպագրելիս 1914-ին (թիվ Բ, էջ 37-38) դրել էր «Ժողովրդականից» ենթավերնագիրը, սակայն ավելի ուշ «Լուսաբեր 5»-ում տպագրել է առանց այդ ենթավերնագրի (Լ. Մ, էջ 191-193): Սրվանձության գրի առած ժողովրդական երգիչ 54 տող ունեցող նախօրինակից Թումանյանը իր «Փոքրիկ երկրագործի» («Եկավ գարուն, եկան հավքեր»,) համար ընտրել է միայն առաջին 9 տողերը:

«Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» պատումն ու Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմը

Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի հիմնական ստեղծագործական աշխատանքը ընթացել է 1902թ.: Բանահյուսության գեղարվեստական մշակման և փոխադրական իմաստավորման նախընթաց երկարամյա հետաքրքրությունն ու փորձը բանաստեղծին հուշում էր դիմել «Սասնա ծռեր» Էպոսի Գարեգին Սրվանձությանի հայտնաբերած ու գրառած 1-ին «Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» պատումին՝ գետեղված «Գրոց ու բրոց» ավանդությունների ու գրույցների ժողովածուի հավելվածում¹: Բանաստեղծը ծանոթ է եղել Էպոսի 16 պատումների, որոնց ցուցակը կազմել էր անձամբ: Սակայն, ըստ Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի ուսումնասիրող ՄագդաՋանփոլադյանի՝ բանաստեղծը բացի Սրվանձությանի տարբերակից (ասացող՝ տարոնցի երեսփոխան Կրպո) օգտագործել է նաև 6 պատում, այդ թվում Մ. Աբեղյանի «Դավիթ և Միեր» (ասացող՝ մոկացի Լախո Քեռի)², Գարեգին սարկավազ Հովսեփյանի «Սասնա ծռեր» (ասացող՝ ապարանցի Մուրադ)³, Բագրատուխալթյանի «Սասնափառլուսներ կամ Թլոր Դա-

¹Գարեգին Սրվանձության, «Գրոց ու բրոց» Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ», Կ. Պոլիս, 1874, 192 էջ:

²Աբեղյան Մ., «Դավիթ և Միեր, ժողովրդական դուրսգնական վեպ, Շուշի, 1889, 61 էջ:

³Հովսեփյան Գարեգին Կաթողիկոս, «Սասնայ ծռեր. Սասունցի Դավիթ. ժողովրդական վեպի երկու նոր վարիանտներ (Աբարանի և Մոկաց բարբառներով)», Թիֆլիս, 1892:

վիթ և Միեր» (ասացող՝ Մուկացի Խապոյենց Չատիկ)¹, Խաչիկ Դադյանի (ասացող՝ Թադևոս առաքյալի վանքի գյուղացի Դավիթ) «Սասունցի Դավիթ» («Տղա Դավիթ»), Սարգիս Հայկունու «Դավիթ և Միեր» (1901. ասացող՝ այրարատցի Մուրատ Հովսեփյան), Արտաշես Աբեղյանի «Թվատ Դավիթ» (1900) պատումներից գեղարվեստական հատվածներ ու մանրամասներ²: Սակայն ինքը բանաստեղծը օգտագործել է տարբերակներից հիմնականում 4-ը՝ այդ թվում Սրվանձությանինը: Նրա գրառած տարբերակի մշակումը տեսնում ենք Սասունից փախչող Կոզբաղիին ուղղված կանանց խոսքում.

Սրվանձությանը գրառել է.
 Խուբաշի ջան, խուբաշի,
 Իդադիեն գացիր քննց գել գազան
 Ըն դիեն եկար քննց շուն վազան
 ...Բերանդ է բաց քննց պատուհան...
 Բերանեդ կերթա քննց չո բկիտըկի թան..
 Թումանյանը գրում է.
 -Եյ, Կոզբաղին մեծաբերան...
 ...Գացիր Սասուն քանց գել գազան,
 Ետ ես գալիս, քանց շուն վազան:

Թումանյանը ընտրել է կանանց միջոցով Կոզբաղիին ծաղրելու հատվածը՝ քաջ գիտակցելով, որ Արևելքում կնոջ ծաղրը տղամարդուն ամենամեծ անպատվություն էր³: Երբ պոեմն առաջին անգամ տպագրվում էր «Մուրճի» 1903թ. 3-րդ, 4-րդ և 5-րդ համարներում, Թումանյանը պոեմի 4-րդ մասի սկզբում դնում է մի ծանոթագրություն, որում հիշատակում է իր օգտագործած աղբյուրները և թվարկումը սկսում է Սրվանձությանի տարբերակից: Բանաստեղծը քաջ գիտակցում էր այդ պատումի գրական, մշակութային ու ազգային մեծ արժեքը, և նրա համար հստակ տեսանելի էր Սրվանձությանի գործի հիմնաքարային նշանակությունը հայոց ոյուցազներգության հետագա կյանքում թե՛ բանահավաքների ու բանագետների հավաքչական գործունեության, թե՛ արվեստագետների գեղարվեստական մշակումների ասպարեզում:

1 «Սասնայփառիկաններ կամ Թըլօր-Դալիթե Միեր: Հայ-ժողովրդական ոյուցազնականվեպի նոր վարիանտ: Մուկաց բարբառով»/Գրի առաւ Բ. Խալաթեանց/ .- Վաղարշապատ: Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1899.

2 Զևակի Պալանյան Մ. Գ., «Թումանյանը և ժողովրդական էպոսը», Եր., 1969, ԵՊՀ հրատ., էջ 69:

3 Այդ մասին տե՛ս **Անեկտա Դուլիանյան** «Սասունցի Դավիթ» ժողովածուները (1939)», «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը և Հովսեփ Օրբելին (Հոգվածների ժողովածու՝ նվիրված համահավաք բնագրի հրատարակման 80-ամյակին), Երևան, 2019, ՀՊՄՀ հրատ. 126 էջ, էջ 20:

Ինչպես նկատում է գրականագետ Աելիտա Դյուվիսյանը «Էպոսը գրեթե ամբողջությամբ արտացոլող Գ.Սրվանձությանի գրառած պատումը ելակետային եղավ մյուս պատումների համար»¹: Թումանյանը Սրվանձությանի պատումում տեսել է Դավթի հերոսական բնավորության ամբողջականությունն ու հոգևոր առողջությունը, որը համահունչ էր բանաստեղծի աշխարհընկալմանը: Անշուշտ, նաև Սրվանձությանի ներկայացրած տարբերակի ուսումնասիրությունը բանաստեղծին հանգեցրեց մեր Էպոսի մասին թեմատիկ խոսք դարձած նրա գնահատականներին և այն ոգևորությանն ու հիացմունքին, որն ուղեկցեց բանաստեղծին մինչև կյանքի վերջ: «Էպոսը շատ մեծ բան է, - ասում է բանաստեղծը, - առավել ևս մերը, հարուստ է, շքեղ և թերևս ավելի մեծ, քան մյուս ազգերի Էպոսները: Համաշխարհային գրականության մեջ մեծ տեղ է բռնում մեր Էպոսը: Մենք ունենք մեր հոգու ներկայացուցիչը, մեր հոգու արտահայտությունը. դա Սասունցի Դավիթն է»²:

Թումանյանը ուշի ուշով ուսումնասիրել է Սրվանձությանի պատումը նաև իբրև բանագետ հետազոտող: Նառ միայն Էպոսի գեղարվեստական մշակման, այլև ժողովրդական հերոսապատման մասին գիտական ուսումնասիրության հեղինակ է: Նկատի ունենք բանաստեղծի «Երկու բառ հայոց Էպոսից» հոդվածը և «Հայկական Էպոսի բառարանից» ուսումնասիրությունը, որոնցով բանաստեղծը համալրեց Սրվանձությանի տարբերակի հրապարակումից հետո Էպոսը լուսաբանող առաջին հետազոտողների՝ բանասերների ու բանագետների՝ Մ.Էմինի, Գ.Խալաթյանի, Մ.Աբեղյանի շարքը: Սրվանձությանը ոչ միայն Էպոսի առաջին հրատարակիչն էր, այլև առաջին հետազոտողը: Նա իր նախաբանում Էպոսի պատմական ատաղձը կապում էր Արծրունյաց նախարարության և Սասնա գավառի սկզբնավորության հետ³: Սրվանձությանը ուշադրություն էր դարձնում անախրոնիզմին, ժողովրդի կենցաղի, սովորությունների նկարագրությանը, մեկնում էր աշխարհագրական վայրերի անունները և այլն: Թումանյանը նույնպես առանձնացնում է անախրոնիզմը՝ որպես սովորական երևույթ Էպոսների համար, որը, սակայն, չի խանգարում նրա ամբողջականությանը⁴: Բայց ի տարբերություն Սրվանձությանի և Էպոսի մյուս հետազոտողների մոտեցումների՝ Թու-

1 Ա. Դյուվիսյան, «Հայ ժողովրդական բանահյուսություն», Երևան, 2008, էջ 75-79 («Ձանգակ-97» հրատ. 268 էջ):

2 Նվարդ Թումանյան, «Հուշեր և գրույցներ», Եր., 1987, «Լույս» հրատ., 335 էջ, էջ 224:

3 Գ. Սրվանձությանց, Գրոց-բրոց» և Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ, Կ. Պոլիս, 1874, էջ 128:

4 Թումանյան, ԵԼԺ 8, էջ 256:

մանյանը չէր կարևորում պատմական ատաղձը, թեև ընդունում էր, որ «Հայկական էպոսն էլ պատմական տարրեր ունի իր մեջ», բայց չէր փորձում դրանք շեշտադրել, քանի որ նրա համոզմամբ: «Նա մի հանրամարդկային ստեղծագործություն է, դյուցազնական ու սիմվոլիկ, մի հավաքական գործ, որի վրա աշխատել են ոչ միայն որոշ ազգի անհատները, այլև բոլոր ազգերը՝ իբրև անհատներ:

Ես պատճառով էլ սխալվում են մեր էն բանասերները, որ հայոց պատմության բանալիով են ուզում բաց անել հայկական էպոսի մեծ փականքը կամ ազգային ճրագով են ուզում լուսավորել նրա մութ անկյունները, ենթադրելով թե նա էս կամ էն հայ իշխանի կամ թագավորի ապարանքն է: Միևնույն ժամանակ հսկայական մի աշխարհք է, ուր ամենքն ունեն իրենց հայրենիքը, և նրան լուսավորում է արեգակը:

Առաջ գալով էս տեսակետից, ընդունված կարծիքին հակառակ, ես ուզում եմ ցույց տալ, որ հայ դյուցազնական վեպը, ինչքան էլ պատմական տարրեր ունենա իր մեջը, իրական վեպ չի»¹:

Թումանյանի բալլադների շարքում ծավալով ամենամեծ չափածո երկը՝ «Գառնիկ ախպերը», ստեղծվել է հիմնականում Տիգրան Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք 1-ին»-ում գետեղված նույնանուն նյութի հիման վրա,² սակայն իբրև սկզբնաղբյուր ծառայել է նաև Սրվանձտյանի «Մանանայում» գետեղված նույն վերնագրով հեքիաթը: Այդ մասին վկայում է անձամբ բանաստեղծը դրամբյանիզմի դեմ իր վիճաբանական պատասխաններից մեկում: «Հովիտի» Ս. Հ.-ի քննադատության առիթով՝ հոդվածում բանագործության մեջ մեղադրվող բանաստեղծը գրում է. «Ես ռուսականը չեմ թարգմանել, տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., այլ հայկականն եմ առել ու մշակել: Եվ հայկականն էլ մի հատ չի, տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., Արարատյան տարբերակը կա, Վասպուրականինը կա, Տարոնինը կա, Շահրիարինը կա, Թիֆլիսինը կա — տպված: Դուք միայն ռուսականն եք տեսել, ինչպես երևում է Դրամբյանի նման դարձյալ «դիպվածով» և էն էլ ռուսական միայն մի տարբերակը գիտեք, որ ու է դառնում, կան և ուրիշ տարբերակներ, ուր հենց գառն է դառնում: Եվ տիրացու Ս. Հ. կամ պարոն Ս. Հ., ես ոչ ռուսական Аленушка-ն եմ փոխել Մանուշի, ոչ Иватушка-ն եմ փոխել Մանուկի, Ուկիկը Գառնիկի, Էդ ամենը զուտ հայկական են, հայ ժողովրդական հեքիաթից, Վասպուրականի վարիանտից, որ գրի է առել հանգ. Սրվանձտյանը և տպված է նրա «Մանանայում», հեքիա-

¹Նույն տեղում, էջ 274 :

²Տե՛ս Ս. Նավասարդյան, «Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք առաջին», Վաղարշապատ, 1882, էջ 14-21:

թի անունն էլ հենց Գառնիկ Կապեր, ինչպես կոչվում է նաև հայկական ուրիշ շրջաններում, օրինակ Արարատյան երկրում»¹:

Գ.Սրվանձտյանի գրի առած ավանդության հիման վրա է ստեղծվել նաև «Որբը» բալլադը²: Թումանյանը գիշերները տխուր ծայնով «Սը-հա՛կ, Սըհա՛կ» կանչող թռչունի մասին լեգենդը ներկայացնում է որպես ազգային հավանքի և տառապանքի թեմա՝ կապելով այն հայ ազգի գրկանքներով լի ողբերգական ճակատագրին: Բանաստեղծի այս բալլադը հեղինակի սիրելի գործերից էր. «Շատ եմ սիրում Սըհակ թռչունի ձենը, մանավանդ Ձաղիծորումը. լեն ու խորը մութ ձորի մեջ նրա ձենը միստիկ տպավորություն է անում վրաս: «Որբը» շատ է հայկական, շատ բնորոշ»³:

Թումանյանը պահել է սկզբնաղբյուրի սյուժեն և գործող անձանց, սակայն կատարել է էական փոփոխություններ: Որպեսզի ընդգծի ազգային տառապանքի թեման և դարավոր թշնամու պատճառած հավանքները, ի տարբերություն բնագրերի, որտեղ եղբորը հափշտակում է արծիվը կամ որևէ այլ գազան, Թումանյանի բալլադում քրոջն առնաձուլում է թուրքը: Հենց միայն այս փոփոխությունը միանգամայն նոր իմաստ ու բովանդակություն է հաղորդում բալլադին:

Թումանյանի լավագույն հեքիաթների սկզբնաղբյուր բնագրերը դարձյալ Սրվանձտյանի ժողովածուներում են: «Համով հոտովից» բանաստեղծը մշակեց «**Պոչատ աղվեսը**» («Անձեղն և յուր պոչիկ») և «**Քաջ Նազարը**» («Դըժիկոն»), իսկ «Մանասայից» «**Անխելք մարդը**» (1894) , «**Խոսող ձուկը**» («Իշխանագուն իմը բախտը ու աղվեսին խելքը») և «**Կռնատ աղջիկը**» («Նահապետենց աղջիկը»): Իհարկե, գրեթե ոչ մի հեքիաթի համար Թումանյանը չէր բավարարվում միայն մեկ սկզբնաղբյուրով: «Դըժիկոն» «Քաջ Նազարի» երեսունից ավելի տարբերակներից միայն մեկն էր: «Քաջ Նազարով» Թումանյանը ստեղծեց հայ գրական հեքիաթի ազգային ոճը, կառուցվածքի սկզբունքները: Սրվանձտյանականայս աղբյուրները թումանյանական վերակերտման ճանապարհով, բանաստեղծի մշակմամբ, նրա անթերի գեղարվեստական զգացողության շնորհիվ դարձան հայ գրականության լավագույն երկերը: Ասվածի լավագույն հավաստումը «Քաջ Նազարն» է, որը կրելով հեղինակի անհատական հանճարի խորը կնիքը ժողովրդական Նյուբի գեղարվեստական մշակման ամենաբարձր արտահայտությունն է:

1 Թումանյան, ԵԼԺ 7, էջ 53-54:

2 Տե՛ս Սրվանձտյան Գ., «Համով-հոտով», Կ. Պոլիս, 1884, էջ 189:

3 Թումանյան Ն., «Հուշեր և գրույցներ», Եր., 1987, «Լույս» հրատ., 335 էջ, էջ 231:

Բանաստեղծը ծանոթ էր «Կռնատ աղջիկը» հեքիաթի բազմաթիվ տարբերակների, որոնցից իր ձեռքի տակ ունեցել է 33 տարբերակ, այդ թվում «Մանանայի» «Նահապետի աղջիկը»¹: «Անխելք մարդը» հեքիաթի համար նա օգտագործել է հայկական, վրացական, իմերեթական և կովկասյան ժողովուրդների մոտ լայնորեն տարածված այլ տարբերակներ: Սակայն, գանազան վերնագրերից ինչպես օրինակ, «Աստծուն գանազատ գնացող մարդը», «Բեդովլաթ տղեն», «Дармоед» Լոռու, արարատյան, միևրեթական և այլ տարբերակների հորագրերից բանաստեղծն ընտրել է հենց «Մանանայի» հեքիաթի վերնագիրը՝ «Անխելք մարդը»՝ քանի որ սիմվոլների բարձունքին հասած բանաստեղծը մարդկային բնավորության ու վարքագծի հատկանիշներից նախընտրում էր առաջին հերթին անխելքությունը՝ ներկայացնել որպես չարիք, որը շատ ավելի ճակատագրական ու սարսափելի է, քան մարդու ապականությունից, ծուկությունից, ուրիշների հաշվին ապրելու պորտաբույծի եսասիրական վարքագծից ծնված տխուր հետևանքները: Հենց, այդ պատճառով նրան հոգեհարազատ էր Սրվանձտյանի գրի առած հեքիաթի վերնագիրը, որնընդգծում էր մարդկային հիմարության մեծագույն չարիք լինելը թե՛ մարդու և թե՛ նրա միջավայրի համար:

Ինչպես նշեցինք, բանաստեղծը ոչ միայն ընթերցում էր Սրվանձտյանի գրքերը՝ իր ստեղծագործության համար սկզբնաղբյուրներ գտնելու, ժողովրդական նյութեր ընտրելու, բանահյուսական հենքով գորանալու նպատակով, այլև հանգամանորեն ուսումնասիրում էր դրանք որպես գիտնական-հետազոտող: Ն.Մառի հայ-վրացական բանասիրության և գրական բնագրերի ու հետազոտությունների մասին աշխատությունը² գրախոսելիս Թումանյան-ուսումնասիրողը քննում է այն երկերը, որոնք աղբյուր են հանդիսացել Մառի աշխատության համար: Նա նշում է նաև Գ.Սրվանձտյանի «Գրոց-Բրոց» ժողովածուի հավելվածը՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռը»: Այդ շարքում էին նաև Նարեկացու «Նարեկ աղոթից» բան Թ.ա.» (Կենետիկ, 1827), Հայնեի «Երգերի գիրքը», Գ.Ախվերդյանի «Սայաթ-Նովա» (Մոսկվա 1852), «Նահապետ Քուչակի դիվանը» (Փարիզ, 1902), Օմար Խայամի քառյակները, Կ.Երզնկացու, Հ.Թլկուրանցու ստեղծագործությունները, Ի.Ա. Ջավախովի «Государственный строй Грузии и древней Армении»³, Ալ. Խոճկոյի մենագրությունը⁴, Թլկուրանցու մասին Կ.Կոստանյանցի

1 ԹԹ, թիվ 1052/9367-9373:

2 Տե՛ս Н. Мэпп, Тексты разыскания по армяно-грузинской филологии, кн., XII, СПб, 1910»

3 Նույն տեղում, կն., VII, стр. 73.

4 «Specimen of the popular poetry of Persia», 1842, էջ 10-11:

աշխատությունը¹: Թումանյանի այս գրախոսականը հավաստում է, որ բանաստեղծը կնոջ նկատմամբ Արևելքի և Արևմուտքի հակադիր վերաբերմունքին, միջնադարյան գրականության մեջ սիրո հոգեբանության տարբեր դրսևորումներին վերաբերող հարցերին անդրադառնալիս մանրագլին ընկության է ենթարկել Սրվանձտյանի աշխատությունները: Հատկապես ուշադրության էր արժանացնում միջնադարյան գրականության մեջ կնոջ պաշտամունքի խնդրին՝ նկատելով, որ «Շատ ու շատ մեծ գործեր կատարել ու կատարում են սիրած կնոջ հրամանով»,² և որ Սասունցի Դավիթը նույնպես հնազանդվում է հանդուրժալի կամքին:

Թումանյանը և՛ ինքն էր ուսումնասիրում հայ միջնադարյան գրականությունն ու բանահյուսական նյութերի ժողովածուները, և՛ փորձում էր ինչպես հայ հասարակությանը, այնպես էլ զավակներին ուղղորդել հայ պատմագրության ու գրականության իմացությամբ զինվելու և դրանով ազգային ինքնության գիտակցությանը հասնելու նպատակին: Եթե հայ հասարակության ազգային ինքնագիտակցությունը բարձրացնելու նպատակին նա ծառայեցնում էր իր նախագահած Հայ գրողների կովկասյան ընկերության ամբիոնը, ապա զավակների համար անձամբ էր կազմակերպում գրական ընթերցումներ, որոնցում իր արժանի տեղն ուներ նաև Սրվանձտյանը: Բանաստեղծի դուստրը՝ Նվարդը գրում է. «Հաճախ էր կարդում ու ոգեշնչում Փալստոս Բյուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի ու հատկապես Խորենացու գրքերով... Երբեմն մեզ համար հատվածներ էր կարդում. հիշում եմ Արիստակես Լաստիվերտցի, Կիրակոս Գանձակեցի, Մատթեոս Ուռնայեցի... Բավականությամբ էր կարդում Գարեգին Սրվանձտյանի «Համով հոտովը»: Բարձր էր գնահատում Նրա և՛ այդ, և՛ մյուս երկերը, Նրա «գեղեցիկ, ժողովրդական ոճերով հարուստ լեզուն»³:

Հենց Թումանյանի ուղղորդումով էր դուստրը՝ Նվարդը ուսումնասիրում Սրվանձտյանի գրքերը ազգային մշակութաբանական թեմաներով տարբեր ընկերությունների ամբիոններից իր ելույթներն ու զեկուցումները պատրաստելիս: 1919թ. դեկտեմբերի 14-ին Նվարդը գրում է. «Կարդում էի Գ.Սրվանձտյանի գիրքը, ժողովրդական երգեր էի ընտրում հայ կնոջ մասին: Մեր ուսանողական միությունում զեկուցում պիտի կարդայի «Հայ կինը ժողովրդական երգերի մեջ»»⁴ թեմայով⁴:

1 Կոստանյանց Կ., «Հովհաննես Թկուրացին և իրտաղերը», Թիֆլիս, 1892, էջ 32:

2 Թումանյան, ԵԼԺ 6, էջ 213:

3 Թումանյան Նվարդ, «Հուշեր և զրույցներ», Եր., 1987, «Լույս» հրատ., էջ 64:

4 Նույն տեղում, էջ 213:

Սրվանձտյանի մահից տասնամյակներ անց Նրա Ներդրումը հայ գրականության մեջ մշտապես արժանանում էր ամենաբարձր գնահատականի, Նրա անունը դրվում էր հայ դասականների կողքին: Արշակ Չոպանյանը «Պակաս մը» հոդվածում անդրադառնալով Բյուսովի «Поэзия Армении» ժողովածուից դուրս մնացած գրողներին, իր վրդովմունքն է արտահայտում գրելով. «Ինչպե՞ս կըլլա, որ Ալիշան, Խրիմյան, Սրվանձտյանց, Ամիրջանյան հոն չեն երևար»¹: Այնուհետև հիշատակելով Նաև Սիամանթոյի, Դանիել Վարուժանի ու Գրիգոր Չոիրապի անունները՝ Չոպանյանը եզրակացնում է. «Անհրաժեշտ է լրացնել այս պակասը, զոր ես նույնիսկ ծանր թերացում մը կնկատեմ այն Նվիրական պարտականության, զոր մենք ազգովին ունինք այդ կրկնագին սիրելի անուններուն մեր բոլորանվեր հարգանքը մատուցանելու»²:

Ուշագրավ է, որ ոչ միայն Չոպանյանը, այլև ժամանակի շատ քննադատներ Սրվանձտյանին ընկալում էին ոչ միայն բանասեր-բանահավաք, ազգագրագետ, այլև որպես գրող: Մկրտիչ Պարսամյանը «Հովի. Թումանյանի ստեղծագործությունը» հոդվածում գրում է. «Խրիմյան, Սրվանձտյան, Գեղամ Լև., տված էին գործեր, որոնց մեջ տիրապետող տարրը գավառն է՝ իր շարժումներով, իր հոգեբանությամբ, ու այլազան տիպարներով... առաջին երկուքին կը վիճակի ժողովրդական աստղծին տալու գեղարվեստական շնորհ ու պեսպիսություն... Հայ գրականության ապագա պատմագիրը և քննադատը պարտականություն մը ունին հանդես ասոնց... գործը վերլուծելու, քննելու և վերագնահատման ենթարկելու իր բովանդակ խորությամբ մեջ»³:

Որպես Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ՝ Թումանյանը գրական երեկոներից մեկը ծրագրել էր Նվիրել Սրվանձտյանի գրական ժառանգությանը: Այդ մասին վկայում է բանաստեղծին ուղղված Լեոյի 1913թ. հունվարի 11-ի նամակը, ուր Լեոն խոստանում էր դասախոսություն կարդալ Սրվանձտյանի մասին⁴:

«Հայոց գրական լեզվի խնդիրը» (1916) հոդվածում գրական լեզվի զարգացման հեռանկարով մտահոգ բանաստեղծը Նախ արձանագրում է տարաշխարհիկ ու բնաշխարհիկ երկվիեղկված գրականության իրողությունը, ապա ընդգծում է Աբովյանի ու Սրվանձտյանի լեզվի կարևոր նշանակությունը հայ գրական լեզվի ու գրականության զարգացման գործում, ընդդրոշում է Նրանց հայոց գրական պարտեզի «կենդա-

1 «Հորիզոն», 1916, թիվ 23, հունվարի 31:

2 Նույն տեղում: Չոպանյանի դիտողությունները ժողովածուի խմբագիրները անսաբ հաշվի են առել:

3 «Հայրենիք», Նյու Յորք, 1923, թիվ 3362, մայիսի 22:

4 ԳԱԹ, ԹՖ 1324, ԹԹ Փբ., 1448:

նի, փարթամ ու շքեղ ծաղիկներ»։ «Լեզուն ո՛ր, գրականությունն ո՛ր... Գրականությունը գաղութների ձեռքին, լեզուն մայր երկրում, - գրում է Թումանյանը։- Մինչդեռ գաղութային լեզուն էսպես գործի մեջ էր ու զարգանում էր իր ճանապարհին, մայր երկրում, բնաշխարհիկ լեզուն, բուն ժողովրդի հետ միասին ալեկոծվում էր արյան ու արտասուքի ծովի մեջ, և եթե շատ կամ քիչ ազդում էր մեր գրական լեզվի վրա, ազդում էր իր միջից դուրս ուղարկած պանդուխտների բերանով, ժողովրդական երգերի միջոցով ու իր ծոցից ելած սակավաթիվ գրողների ձեռքով, էստեղ մի Աբովյանի, կամ մի Աղայանի ու Պռոշյանի, Էստեղ մի Խրիմյանի կամ Սրվանձտյանի։

Աբովյանը կամ Սրվանձտյանը՝ իրենց հետևորդներով, լեզվական տեսակետից, իմ երևակայությանառջև պատկերանում են ճիշտ պարտեզի մեջ, ուր փթթում ու ծաղկում են Հայաստանի կլիմային հատուկ փարթամ ու շքեղ ծաղիկները...

...Եվ ահա նրանք՝ մի Աբովյան կամ մի Սրվանձտյան, Ես կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ։

Իսկ մեր գաղութային գրողներին ու հրապարակախոսներին Ես նմանեցնում եմ էդ պարտեզի պարիսպներից դուրս, հեռու մարդկանց, որոնք գույնզգույն թղթերից արհեստական ծաղիկներ են շինում, նրանցից են փնջեր կազմում»¹։

Եզրակացություն

Ժողովրդական բանահյուսությամբ ու նաև բանագիտությամբ Թումանյանը զբաղվել է իր կյանքի ողջ ընթացքում, հետևաբար Սրվանձտյանի աշխատությունները Թումանյանի համար եղել են մշտական հետաքրքրության առարկա, ներշնչել են բանաստեղծին։ Դրանցում բանաստեղծը հայտնաբերել է իր ստեղծագործական տարերքին ու գեղարվեստական խառնվածքին համահունչ սյուժեներ, կերպարներ ու բնավորություններ, ժողովրդական մտածողությանը հարազատ կառուցվածք ու հայ գրական լեզվի զարգացմանը նպաստող լեզվաոճական դրսևորումներ։ Սրվանձտյանի ժողովածուներում գետնոված մի շարք բանահյուսական նյութեր ու երկեր Թումանյանը վեստեղծել է՝ պահպանելով ժողովրդական ոգու ու մտածողության հարազատությունը, պարզությունը։

Այսպես 20-րդ դարի սկզբին մեծանուն բանահավաք Սրվանձտյանը նիաշխատությունները և հայ գրականության ողջ պատմության մեջ

1 Թումանյան, հ. 7, էջ 292-293։

գեղարվեստական մշակումների ասպարեզում բացառիկ ու անմրցելի անուն Թումանյանի ստեղծագործությունը հայտնվեցին հայ գրականության պատմության միևնույն շրջագծում և նրանց հանդիպման կետում հայ գրականությունը հարստացավ մնայուն երկերով:

Սուսաննա Հովհաննիսյան- բ. գ. դ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ մշակույթի և հայ դասական գրականության պատմություն, թումանյանագիտություն: Հեղինակ է 15 մենագրությունների և գրքերի, ավելի քան 5 տասնյակ համահեղինակությամբ ժողովածուների և 200 գիտական հոդվածների:

sushovh@mail.ru

SUSANNA HOVHANNISYAN - GAREGIN SRVANDZTYAN IN THE CONTEXT OF HOVHANNES TUMANYAN'S TREATMENTS OF FOLKLORE SOURCES

Artistic processing of folklore materials is one of the main areas of Hovhannes Tumanyan's literary preferences. As a creative person and researcher, he has been investigating folklore and source study all his life and has become an exceptional and unsurpassed authority in the field of artistic processing of folk art.

The literary and scientific heritage left by the outstanding scientist-armenologist and folklore collector Garegin Srvandztyan has always been within Tumanyan's scientific and artistic interests. On the basis of Srvandztyan's fairy tales and collections of folk songs, dozens of the poet's works were written. Noteworthy are the differences between the folk versions recorded by Srvandztyan and the poet's artistic adaptations.

While working on the poem "Sasuntsi David", Tumanyan used six of the sixteen narrations of the epic "SasnaTsrer" known to him, including the first narration of the epic "Sasuntsi David or the door of Mher", identified and recorded by Srvandztyan.

Both Srvandztyan and Tumanyan were great experts and connoisseurs of folk art. In their studies of the epic, they singled out anachronism as a common phenomenon inherent in this genre, which did not interfere with its integrity. However, unlike the approaches of Srvandztyan and other researchers of the epic, Tumanyan did not attach great importance to the historical core of the epic. The poet often turned to Srvandztyan's philological studies. Considering various aspects of the psychology of love in Armenian medieval literature, Tumanyan subjected the scientific works of Srvandztyan to a thorough analysis. They were for the poet the subject of constant and unrelenting interest, a source of inspiration. Tumanyan identified plots, images and characters in them that corresponded to his creative passions and artistic nature, as well as structures, language and style solutions close to folk thinking. The poet recreated all

this, preserving the kinship with the national spirit and mentality, simplicity and clarity of presentation.

Tumanyan had great respect for the research work and creative heritage of the outstanding philologist and folklorist. It is in this context that his greatest appreciation and high appraisal of Srvandztyan's labor activity in the field of Armenian studies, philology, in particular, folklore, should be considered. Being the chairman of the Caucasian Society of Armenian Writers, Tumanyan intended to dedicate one of the literary evenings to the literary heritage of Srvandztyan.

In the article "Problems of the Armenian literary language", Tumanyan described KhachaturAbovyan and Garegin Srvandztyan as "living, lush and luxurious flowers in the garden of Armenian literature".

Tumanyan was engaged in folklore and philology all his life, therefore Srvandztyan's works were for him the subject of constant and unrelenting interest, and served as a source of inspiration for the poet. In them, Tumanyan found plots, images and characters that corresponded to his creative passions and artistic temperament; found forms and structures, as well as stylistic means, close to folk thinking and contributed to the development of the Armenian literary language. Tumanyan subjected to artistic processing and recreated a number of folklore materials and works placed in the collections of Srvandztyan, while maintaining the closeness and simplicity of the folk spirit and thinking.

Thus, at the beginning of the 20th century, the source studies and the works of the outstanding collector of oral folk art Garegin Srvandztyan and the works of art of the greatest Armenian poet Hovhannes Tumanyan found themselves on the same plane of the history of Armenian literature, and at the point of their meeting, Armenian literature was enriched with enduring works of art.

Key words: Armenian literature, Hovhannes Tumanyan, Garegin Srvandztyan, folklore, philology, source studies, folk art, "Sasuntsi David", "SasnaTsrer", epic, narration.

СУСАННА ОВАНЕСЯН - ГАРЕГИН СРВАНДЗТЯН В КОНТЕКСТЕ ОБРАБОТОК ФОЛЬКЛОРНЫХ ИСТОЧНИКОВ ОВАНЕСА ТУМАНЯНА - Художественная обработка фольклорных материалов является одной из основных сфер литературных предпочтений Ованеса Туманяна. Как творческая личность и исследователь он всю жизнь занимался изучением фольклора и фольклористикой и стал исключительным и непревзойденным авторитетом в области художественных обработок народного творчества.

Литературное и научное наследие, оставленное выдающимся учёным-арменоведом и собирателем фольклора Гарегиним Срвандзтяном, всегда находилось в рамках научных и художественных интересов Туманяна. На основе

сказок Срвандзтяна и сборников народных песен написаны десятки произведений поэта. Примечательны различия между народными вариантами, записанными Срвандзтяном, и художественными обработками поэта.

Работая над поэмой «Сасунци Давид», Туманян использовал шесть из шестнадцати известных ему повествований эпоса «Сасна црер», в том числе первое повествование эпоса «Сасунци Давид или дверь Мгера», выявленное и записанное Срвандзтяном.

И Срвандзтян, и Туманян были большими знатоками и ценителями народного творчества. В своих исследованиях эпоса они выделяли анахронизм как обычное явление, присущее для этого жанра, что не мешало его цельности. Однако в отличие от подходов Срвандзтяна и других исследователей эпоса, Туманян не придавал важного значения историческому стержню эпоса. Поэт часто обращался к филологическим исследованиям Срвандзтяна. Рассматривая различные аспекты психологии любви в армянской средневековой литературе, Туманян подвергал обстоятельному анализу научные труды Срвандзтяна. Они были для поэта предметом постоянного и неослабевающего интереса, источником вдохновения. Туманян выявлял в них сюжеты, образы и характеры, соответствующие его творческим пристрастиям и художественной натуре, а также структуры, языковые и стилевые решения, близкие народному мышлению. Поэт воссоздавал всё это, сохраняя родство с народным духом и менталитетом, простоту и ясность изложения.

Туманян с большим уважением относился к исследовательской работе и творческому наследию выдающегося филолога и фольклориста. Именно в этом контексте следует рассматривать его величайшую признательность и высокую оценку трудовой деятельности Срвандзтяна в области арменоведения, филологии, в частности, фольклористики. Являясь председателем Кавказского общества армянских писателей, Туманян намеревался посвятить один из литературных вечеров литературному наследию Срвандзтяна.

В статье «Проблемы армянского литературного языка» Туманян охарактеризовал Хачатура Абовяна и Гарегина Срвандзтяна как «живые, пышные и роскошные цветы в саду армянской литературы».

Туманян всю свою жизнь занимался фольклором и филологией, поэтому произведения Срвандзтяна были для него предметом постоянного и неослабевающего интереса, служили поэту источником вдохновения. В них Туманян обнаруживал сюжеты, образы и характеры, соответствующие его творческим пристрастиям и художественному темпераменту; находил формы и структуры, а также стилевые средства, близкие народному мышлению и способствующие развитию армянского литературного языка. Туманян подверг художественной обработке и воссоздал ряд фольклорных материалов и

произведений, помещенных в сборниках Срвандзтяна, сохранив при этом близость и простоту народного духа и мышления.

Таким образом, в начале 20 века источниковедческие изыскания и труды выдающегося собирателя устного народного творчества Гарегина Срвандзтяна и художественные произведения величайшего армянского поэта Ованеса Туманяна оказались в одной плоскости истории армянской литературы, и в точке их встречи армянская литература обогатилась непреходящими художественными произведениями.

Ключевые слова: армянская литература, Ованес Туманян, Гарегин Срвандзтян, фольклор, филология, источниковедение, народное творчество, «Сасунци Давид», «Сасна црер», эпос, повествование.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., «Դավիթ և Միեր, ժողովրդական դյուցազնական վեպ», Շուշի, 1889, 6 էջ:

2. Դոլուխանյան Ա. , «Հայ ժողովրդական բանահյուսություն», Երևան, 2008, էջ 75-79 «Ձանգակ-97» հրատ.,268 էջ:

3. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ. 1, Երևան, 2018, «Բեկոր-հրատ», 786 էջ :

4. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ.6, Երևան, 1994, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 670 էջ:

5. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 7, «Քննադատություն և հրապարակախոսություն 1913-1922», Երևան, 1995, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 721 էջ:

6. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հ.8, «Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր», Երևան, 1999, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 712 էջ:

7. Թումանյան Նվարդ, «Հուշեր և զրույցներ», Երևան, 1987, «Լույս» հրատ., 335 էջ:

8. «Լուսաբեր Ա», կազմեցին Ստ.Լիսիցյան, Հովհ.Թումանյան, Թիֆլիս, 1907, Ն. Աղանյանի տպ. 96 էջ :

9. «Լուսաբեր.Բ», Թիֆլիս, 1909, կազմ. Ստ.Լիսիցյան, Հովհ.Թումանյան, Լ.Շանթ , 128 էջ:

10. «Լուսաբեր Գ», Թիֆլիս 1909, կազմ. Ստ.Լիսիցյան, Հովհ.Թումանյան, Լ.Շանթ, Ն. Աղանյանի տպ. 96 էջ:

11. «Լուսաբեր .Գ», Թիֆլիս, 1909 , կազմ. Ստ.Լիսիցյան, Հովհ.Թումանյան, Լ.Շանթ. Ն. Աղանյանի տպ, 160 էջ:

12. «Լուսաբեր Գ», Թիֆլիս, 1920, կազմ. Ստ.Լիսիցյան, Հովհ.Թումանյան, Թիֆլիս, 1920, Տպարան «Պրոգրես», 176 էջ:

13. Խալաթյան Բ., «Սասմայիսիաիլաններ կամ Թըլօր-Դալիթել Միեր: Հայ-

ժողովրդական դիւցազնական վէպի նոր վարիանտ: Մոկաց բարբառով» /Գրի առաւ՝ Բ. Խալաթեան/ .- Վաղարշապատ: Տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1899, 75 էջ:

14. Կոստանյան Կ., «Հովհաննես Թլկուրանցիի և իւրտաղերը», Թիֆլիս, 1892, 60 էջ:

15. «Հազար ու մի խաղ ժողովրդական երգարան առաջին յիսնեակ», խմբագրեցին Կոմիտաս Վարդապետ . Մանուկ Աբեղեան, Վաղարշապատ, 1904, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 103 էջ:

16. «Հազար ու մի խաղ ժողովրդական երգարան երկրորդ յիսնեակ», խմբագրեցին Կոմիտաս Վարդապետ . Մանուկ Աբեղեան, Վաղարշապատ, 1905, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 71 էջ:

17. Март Н., Тексты и разыскания по армяно-грузинской филологии, кн., . XII, СПб, 1910, кн., VII, 113 стр.

18. Յովսէփեան Գարեգին կաթողիկոս, «Սասունցի Դավիթ. ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ (Աբարանիւն Մոկաց բարբառներով)», Թիֆլիս, 1892:

19. Նավասարդյան Տ., «Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք առաջին», Վաղարշապատ, 1882:

20. Ջանփոլադյան Մ. Գ., «Թումանյանը և ժողովրդական էպոսը», Եր., 1969, Երևանի համալսարանի հրատ., 199 էջ :

21. «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը և Հովսէփ Օրբելին («Հոգվածների ժողովածու՝ նվիրված համահավաք բնագրի հրատարակման 80-ամյակին»), Երևան, 2019, ՀՊՄՀ հրատ. 126 էջ:

22. Սրվանձտյան Գ., «Համով-հոտով», Կ. Պոլիս, 1884, 384 էջ:

23. Սրվանձտյան Գ., «Գրոց ու բրոցեւ Սասունցի Դավիթ կամ Միերի դուռ» (պատում. արծակ. Պատմ. Մշուկմնիստ գյուղացի Կրպո), Կ. Պոլիս, տպ. Ե. Մ. Տևտեսան, 1874, 192 էջ:

24. Սրվանձտյան Գ., «Մանանայ», Կ. Պոլիս, 1876, 458 էջ:

25. «Specimens of the popular poetry of Persia», 1842, 592 էջ :

ԱՐԽԻՎ

26. ԳԱԹ, ԹՖ, № 1324, ԹԹ Փբ., № 1448:

27. ԹԹ, № 1052/9367-9373

ՄԱՍՈՒԼ

28. «Հայրենիք», Նյու Յորք, 1923, № 3362, մայիսի 22:

29. «Հորիզոն», 1916, Թիֆլիս, № 23, հունվարի 31:

30. «Վեմ», Երևան, 2009, թիվ 3 (28), հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 159:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-231